ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստեր

2004թ. հուլիսի 2-ին տեղի է ունեցել ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի առաջին նիստը: Քննարկվել են ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի 2004թ. գործունեության աշխատանքային պլանի նախագիծը, հակակոռուպցիոն ռազմավարություն իրականացնող մոնիտորինգի հանձնաժողովի կազմը, հանձնաժողովի աշխատակարգը եւ ընթացիկ հարցեր: Անդրադարձ է եղել նաեւ գերատեսչական հակակոռուպցիոն ծրագրերին:

Նիստում որոշվել է մինչեւ 2004թ. տարեվերջ անցկացնել խորհրդի եւս երեք նիստ, որոնցում, ըստ աշխատանքային պլանի, քննության կառնվեն կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության, կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային կազմակերպությունների կոնվենցիաներով, համաձայնագրերով եւ այլ փաստաթղթերով ՀՀ ստանձնած պարտավորությունների եւ հանձնառությունների կատարման ընթացքը: Կքննարկվեն նաեւ նշված հարցերով մոնիտորինգի հանձաժողովի առաջարկությունները, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության գերատեսչական ծրագրերի իրականացման ընթացքը, իրավապահ եւ վերահսկողություն իրականացնող մարմինների գործունեությունը հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման գործում, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2004թ. միջոցառումների իրականացման ընթացքը: Աշխատանքային պլանի մեջ ընդգրկված է նաեւ ՀՀ նախագահին ներկայացվելիք խորհրդի աշխատանքների եւ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2004թ. միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ զեկույցի նախագծի քննարկումը:

Նշվել է, որ հաստատված աշխատանքային պլանը խորհրդի գործունեության համար ծառայելու է իբրեւ ուղեցույց, որը, անհրաժեշտության դեպքում, կարող է լրացվել օրակարգային այլ հարցերով:

Խորհրդի անդամները հաստատել են նաեւ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի աշխատակարգը: Նշվել է, որ հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգվում է նրա աշխատակարգով, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի որոշումներով եւ իրականացվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Նիստում ձեւավորվել է հակակոռուպցիոն ռազամավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովը, որի նախագահն է ՀՀ նախագահի խորհրդական Բագրատ Եսայանը: Հանձնաժողովում ընդգրկվել են ՀՀ ԱԺ պատգամավորական խմբակցությունների եւ խմբերի մեկական ներկայացուցիչ (համաձայնությամբ), կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խմբում (GRECO) ՀՀ պատվիրակության ղեկավար Աշոտ Գալոյանը, ՀՀ պետական կառավարաման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի քարտուղար, անցումային տնտեսություններ ունեցող երկրների հակակոռուպցիոն նախաձեռնությունում աշխատանքային խմբի ղեկավար Արմեն Խուդավերդյանը, տարածաշրջանային զարգացման կենտրոն Թրենսփերենսի

ինքերնեշնլի հայաստանյան մասնաճյուղի նախագահը (համաձայնությամբ), Խորհրդի որոշմամբ հանձնաժողովում ընդգրկվել են նաեւ 7 անդամ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների եւ խմբերի կողմից առաջարկվելիք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ցուցակից, որոնք փոփոխվում են տարեկան մեկ անգամ ռոտացիոն կարգով՝ խորհրդի որոշմամբ:

Հանձնաժողովի անդամները հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով: Ըստ աշխատակարգի, հանձնաժողովի անդամը առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողովի գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ, իրականացնում է այդ գործունեությունից բխող այլ աշխատանքներ: Հանձնաժողովի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ: Սահմանվել է, որ հանձնաժողովն իր առջեւ դրված խնդիրների լուծման համար իրավունք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից եւ այլ կազմակերպություններից, սահմանված կարգով, պահանջել եւ ստանալ իր գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվություն, վիճակագրական տվյալներ ու այլ փաստաթղթեր, հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ կատարել ուսումնասիրություններ եւ հետազոտություններ, կազմել աշխատանքային խմբեր կամ ենթախմբեր, ներգրավել փորձագետներ, կազմակերպել կոռուպցիայի դեմ պայքարի հարցերին նվիրված համաժողովներ, սեմինարներ, հեռուստահաղորդումներ, ինչպես նաեւ տարբեր բնույթի այլ քննարկումներ:

2004թ. սեպտեմբերի 24-ին տեղի է ունեցել ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի երկրորդ նիստը: Քննարկվել են ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության եւ դրա իրականացման միջոցառումների ծրագրի կատարման ընթացքը, կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության եւ ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ եւ ընթացիկ այլ հարցեր:

Նիստում խորհուրդը ի գիտություն է ընդունել կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում միջազգային կազմակերպությունների (GRECO, OECD, UN) հետ համագործակցության վերաբերյալ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի նախագահ, ՀՀ նախագահի խորհրդական Բագրատ Եսայանի զեկույցը: Մինչեւ հարցի մասին զեկուցելը, նա ներկայացրել է մոնիտորինգի հանձնաժողովի անհատական կազմը, որին ԱԺ «Արդարություն» եւ «Ազգային միաբանություն» խմբակցությունները ոչ միայն հրաժարվել են մասնակցել, այլեւ հասարակական կազմակեպությունների ներկայացուցիչների թեկնածություններ առաջարկել այդ աշխատանքներին մասնակցելու համար: Այնուհետեւ, անդրադառնալով քննարկվող հարցին, հանձնաժողովի նախագահը, մասնավորապես, տեղեկացրել է, որ ՀՀ կառավարության աշխատակազմը եւ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը համատեղ մշակել են

«Կոռուպցիայի մոնիտորինգի քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացում Հայաստանում» ծրագիրը, որը բաղկացած է 3 մասից՝ իրավիճակի վերլուծություն, ծրագրի արդյունքների եւ ռեսուրսների շրջանակներ, ընդհանուր աշխատանքային ծրագիր եւ ՀՀ պետական բյուջե: Ըստ զեկուցողի, Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (GRECO), որին մեր երկիրն անդամակցում է 2004թ. հունվարից, ազգային զեկույցի կազմման նպատակով ներկայացրել է հարցաշարեր, որոնց հիման վրա մինչեւ հոկտեմբերի վերջը պետք է իրականացվեն ազգային զեկույցի նախապատրաստման աշխատանքները: Այդ նպատակով ստեղծվել է փորձագետների խումբ: Բագրատ Եսայանը նշել է, որ այս տարվա հունիսի 16-18-ը Փարիզում կայացած հանդիպման ժամանակ Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպությունը (OECD) նույնպես կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում աշխատանքների վիճակի մասին ՀՀ ազգային զեկույցի վերաբերյալ տվել է երաշխավորություններ, որոնց հիման վրա մշակվել է միջոցառումների ծրագիր:

Հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի կատարման վերաբերյալ խորհրդի անդամ, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մանուկ Թոփուզյանը զեկուցել է, որ 2003թ.-ին նախատեսված բոլոր 9 միջոցառումները՝ ՀՀ օրենքների նախագծերի, ՀՀ կառավարության որոշումների նախագծերի նախապատրաստում եւ հաստատում, մաքսային մարմինների միջեւ ընդհանուր կապ ապահովող ցանցի ներդնում եւ այլն, ամբողջովին իրականացվել են: 2004թ. ծրագրով նախատեսված 17 միջոցառումներից անցած ամիսների ընթացքում կատարվել է 10-ը: Դրանց թվում են արտահանման թույլտվությունների ընթացակարգերի պարզեցումն ու պահանջվող փաստաթղթերի թվի կրճատումը, հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումների ծրագրի ներկայացումը կառավարություն, ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ աշխատանքային օրենսգրքի, մի շարք ՀՀ օրենքների նախագծերի նախապատրաստումը, որոնք արժանանացել են ՀՀ կառավարության հավանությանը, իսկ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին ՀՀ օրենքն արդեն իսկ ընդունվել է ԱԺ-ի կողմից: Ներկայումս ընթացքի մեջ է 7 միջոցառում, որոնք վերաբերում են, մասնավորապես, դատական, կրթական եւ լիցենզավորման բնագավառներում բարեփոխումներին: Ինչ վերաբերում է առաջիկա ծրագրերին, ապա, ըստ Մանուկ Թոփուզյանի, 2004-2005 եւ 2004-2006 թվականների ընթացքում նախատեսված է 63 միջոցառում, որից 16-ը եւս ներկայումս իրականացվել է:

Վարչապետը հանձնարարել է ներկայացված հաշվետվությունը լրացնել վերլուծությամբ՝ դրանում նշելով նաեւ հիշատակված միջոցառումների արդյունքը եւ այն ամբողջությամբ հրապարակել:

Խորհրդի նիստում քննարկվել են կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային կազմակերպությունների կոնվենցիաներով, համաձայնագրերով եւ այլ փաստաթղթերով Հայաստանի ստանձնած պարտավորությունների եւ հանձնառությունների կատարման ընթացքը, ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության վերաբերյալ ԱՄՆ կառավարության

մեկնաբանությունները: Նկատի ունենալով հասարակական, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների, ԱՄՆ կառավարության կողմից հակակոռուպցիոն ռազմավարության վերաբերյալ հաշվետու շրջանում արված դիտողություններն ու առաջարկությունները, Անդրանիկ Մարգարյանը հանձնարարել է մոնիտորինգի հանձնաժողովի նախագահին ստեղծել աշխատանքային խումբ՝ այդ առաջարկությունների հիման վրա, նաեւ ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության մեջ, անհրաժեշտության դեպքում որոշակի փոփոխություններ կատարելու նպատակով:

2005թ. մարտի 26-ին տեղի է ունեցել ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի երրորդ նիստը: Քննարկվել են ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության եւ դրա իրականացման միջոցառումների ծրագրի կատարման ընթացքը, կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության եւ ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ ու ընթացիկ այլ հարցեր:

2004-2007թթ. ժամանակահատվածում ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի եւ դրա իրականացման վերաբերյալ, խորհրդի անդամ, Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի նախագահ, ՀՀ նախագահի խորհրդական Բագրատ Եսայանը զեկուցել է, որ հանձնաժողովում արդեն իսկ ստեղծվել են 10 աշխատանքային խմբեր, աշխատանքներում ներգրավվել են 128 հասարակական կազմակերպություններ: Ըստ նրա, 2004-2007թթ. ժամանակահատվածում նախատեսված ընդհանուր թվով 98 միջոցառումներից իրականացվել է 62-ը,36-ը ընթացքի մեջ են: 2004թ. ընթացքում նախատեսված 18-ից իրականացվել է 17-ը, մեկը՝ «Մագիստրատուրայում ուսուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը կառավարություն ներկայացնելու միջոցառումը, կկատարվի 2005թ.-ին՝ «Բարձրագույն եւ հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո: Զեկուցման համաձայն, 2004-2005թթ. ընթացքում նախատեսված 48 միջոցառումից իրականացվել է 32-ը, 16-ը կատարման փուլում է, իսկ 2004-2006թթ. միջեւ ընկած ժամանակահատվածում նախատեսվածից կատարվել է 4-ը, ընթացքի մեջ է 12-ը: Իրականացման փուլում է նաեւ 2004-2007թթ. միջեւ ընկած ժամանակահատվածում նախատեսված 3 միջոցառում: Ուսուցողական կամ քարոզչական բնույթ կրող 4 միջոցառումներ իրականացվում են պարբերաբար: Զեկուցողը նշել է, որ կատարված միջոցառումների թվում, Ազգային Ժողովի եւ կառավարության կողմից համապատասխանաբար մի շարք օրենքներ եւ որոշումներ են ընդունվել ստվերային տնտեսության բացահայտման ու կրճատման, հարկատուների իրավունքների պաշտպանության մեխանիզմների, մաքսային օրենսդրության կատարելագործման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով՝ բուհերի լիցենզավորման ընթացակարգի, բուհի ընդունելության գործող կարգի բարեփոխումների, շրջակա միջավայրի պահպանության, վերականգնման,

աշխատանքային նոր հարաբերությունների օրենսդրական կարգավորման եւ հակակոռուպցիոն ուղղվածություն ունեցող այլ հիմնախնդիրների վերաբերյալ:

Կարեւորելով ծրագրով նախատեսված միջոցառումների ժամանակին եւ արդյունավետ կատարումը, վարչապետն առաջարկել է խորհրդում պարբերաբար լսել նաեւ այդ ուղղությամբ առանձին պետական մարմինների ղեկավարների տեղեկատվությունները: Ըստ այդմ, որոշվել է, որ խորհրդի առաջիկա նիստում տեղեկատվություն կներկայացնեն ՀՀ գլխավոր դատախազը, Կենտրոնական բանկի նախագահը եւ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահը, այնուհետեւ՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետը, մաքսային պետական կոմիտի նախագահը եւ ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի նախագահը:

Բագրատ Եսայանի ներկայացմամբ խորհուրդը քննարկել է նաեւ Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (OECD) անցումային տնտեսություններով երկրների հակակոռուպցիոն ցանցի կողմից կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում աշխատանքների վիճակի մասին ՀՀ ազգային զեկույցի վերաբերյալ ներկայացված երաշխավորությունների կատարման նպատակով իրականացվելիք միջոցառումների ծրագրի նախագիծը: Ծրագիրն ընդգրկում է ավելի քան մեկ տասնյակ միջոցառում, այդ թվում՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի» քրեական եւ քաղաքացիական իրավունքի եվրոպական կոնվենցիաների պահանջներին համապատասխան ՀՀ «Քրեական» եւ «Քրեական դատավարության» օրենսգրքերում փոփոխությունների կատարում, վիճակագրական տվյալների հավաքագրման, վերլուծության մեխանիզմների մշակում, միջգերատեսչական տեղեկատվական լոկալ ցանցի ներդնում, քաղաքացիական ծառայության համակարգի լիարժեք կայացումից հետո՝ պետական ծառայության միասնական համակարգ ստեղծելու հնարավորության եւ նպատակահարմարության վերաբերյալ քննարկումների կազմակերպում եւ այլն, որոնք իրականացվելու են 2005-2006թթ. ժամանակահատվածում:

Վարչապետ Անդրանիկ Մարգարյանը հանձնարարել է՝ քննարկման արդյունքում արված առաջարկությունները հաշվի առնելով, ամբողջացնել նախատեսված միջոցառումների ծրագիրը, դրանք նաեւ ՀՀ կառավարության 2005թ. գործունեության միջոցառումների ծրագրում ներառելու նպատակով:

Նիստում խորհուրդն ի գիտություն է ընդունել այս տարվա փետրվարի 21-23-ը Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության եւ Ուկրաինայի արդարադատության նախարարության կողմից Կիեւում կազմակերպված «Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային չափանիշները» թեմայով գիտաժողովի վերաբերյալ Բագրատ Եսայանի հաղորդումը եւս: Նա նշել է, որ գիտաժողովի արդյունքում, որին մասնակցել են նաեւ ՀՀ դատախազության, արդարադատության նախարարության եւ ոստիկանության փորձագետները, կազմվելու է ամփոփիչ փաստաթուղթ՝ յուրաքանչյուր երկրի կողմից ձեռնարկվելիք քայլերի ուղղությունների մատնանշմամբ, միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորություններին ազգային օրենսդրությունների

համապատասխանությունն ապահովելու նպատակով: Այդ կապակցությամբ վարչապետը հանձնարարել է հարցը քննարկել ՀՀ-ի եւ եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջեւ կնքված գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի իրականացման ազգային ծրագրի մշակման աշխատանքների համակարգման հանձնաժողովի աշխատանքային խմբում՝ ՀՀ օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու նպատակով:

Նիստում խորհրդի անդամները քննարկել եւ հաստատել են նաեւ 2005թ. ընթացքում հակակոռուպցիոն մոնիտորինգի շրջանակներում կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) փորձագետների կողմից Հայաստան կատարելիք հնարավոր այցելությունների ժամանակացույցը, հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի աշխատակարգի փոփոխությունները: